ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2012 թվականի N 49-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ, ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, ԱԶԱՏԱՄՈՒՏ, ԱՃԱՐԿՈՒՏ, ԲԵՐՔԱԲԵՐ, ԳԱՆՁԱՔԱՐ, ԳԵՏԱՀՈՎԻՏ, ԼՈՒՍԱՁՈՐ, ԴԻՏԱՎԱՆ, ՍԵՎՔԱՐ, ԿԻՐԱՆՑ, ՎԱԶԱՇԵՆ, ՀԱՂԱՐԾԻՆ, ԹԵՂՈՒՏ, ԳՈՇ, ԱՅՐՈՒՄ, ԱՐՃԻՍ, ԲԱՐԵԿԱՄԱՎԱՆ, ԲԱԳՐԱՏԱՇԵՆ, ԲԱՂԱՆԻՍ, ԴԵՂՁԱՎԱՆ, ԴՈՎԵՂ, ԼՃԿԱՁՈՐ, ԿՈԹԻ, ԿՈՂԲ, ՀԱՂԹԱՆԱԿ, ՈՍԿԵՊԱՐ, ՈՍԿԵՎԱՆ, ՊՏՂԱՎԱՆ, ԱՅԳԵՊԱՐ, ԱՅԳԵՁՈՐ, ԱՐԾՎԱԲԵՐԴ, ՏԱՎՈՒՇ, ԻԾԱՔԱՐ, ՎԵՐԻՆ ԾԱՂԿԱՎԱՆ, ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ, ՄՈՎՍԵՍ, ՆԱՎՈՒՐ, ՆՈՐԱՇԵՆ, ՉԻՆՉԻՆ, ՉԻՆԱՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԲԵՐԴ, ԱՅԳԵՀՈՎԻՏ, ԵՆՈՔԱՎԱՆ, ԲԵՐԴԱՎԱՆ, ՋՈՒՋԵՎԱՆ, ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ, ՉՈՐԱԹԱՆ, ՊԱՌԱՎԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԱՉԱՋՈՒՐ, ԱԿՆԱՂԲՅՈՒՐ, ԼՈՒՍԱՀՈՎԻՏ, ՆԵՐՔԻՆ ԾԱՂԿԱՎԱՆ, ՎԱՐԱԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ կետով և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 15.05.2012թ. թիվ N 271-Ա որոշմամբ

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան, Նոյեմբերյան, Ազատամուտ, Աճարկուտ, Բերքաբեր, Գանձաքար, Գետահովիտ, Լուսաձոր, Դիտավան, Սևքար, Կիրանց, Վազաշեն, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Այրում, Արճիս, Բարեկամավան, Բագրատաշեն, Բաղանիս, Դեղձավան, Դովեղ, Լճկաձոր, Կոթի, Կողբ, Հաղթանակ, Ոսկեպար, Ոսկեվան, Պտղավան, Այգեպար, Այգեձոր, Արծվաբերդ, Թովուզ, Իծաքար, Վերին Ծաղկավան, Ներքին Կարմիրաղբյուր, Մովսես, Նավուր, Նորաշեն, Չինչին, Չինարի համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, Բերդ, Այգեհովիտ, Ենոքավան, Բերդավան, Ջուջևան, Վերին Կարմիրաղբյուր, Չորաթան, Պառավաքար համայնքներում համայնքի ղեկավարի, Աչաջուր, Ակնաղբյուր, Լուսահովիտ, Ներքին Ծաղկավան, Վարագավան համայնքներում ավագանու անդամների հերթական ընտրությունները նշանակել 2012թ. սեպտեմբերի 23-ին:

2. Առաջարկել վերը նշված համայնքների ղեկավարներին.

Օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:

3. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանին.

Ընտրության նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 40 և 41 ընտրատարածքային ընտրական և տեղամասային ընտրական հանձնաժողովների հետ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. մայիսի 25
ք. Իջևան